ԴՎԻՆԻՑ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՄԲ ՍԱԼ

ԳԱՅԱՆԵ ՔՈՉԱՐՅԱՆ

1976 թ. Դվինի միջնաբերդից հարավ-արևմուտք, քաղաքային թաղամասում, դաշտային աշխատանքների ժամանակ գտնվել է խնամքով մշակված մի բազալտե սալ (նկ. 1)։ Պահպանված մասի ստույգ տվյալների հիման վրա տալիս ենք սալի վերակազմությունը (նկ. 2)։ Այն եղել է սեգմենտաձև, եզերված բարձր կլորավուն կողերով և ակոսառվակով, որն երկու հակադիր ծայրերում վեր է ածվել ծորակների։ Դրանցից դեպի կենտրոն ձգվել են մեկական այլ, ավելի նեղ ակոսներ։ Քարի միջին մասը եղել է հարթ։ Նկարագրված սալը բոլոր մանրամասներով բացահայտում է իր արտադրական նշանակությունը, որի վրա առաջին անգամ մեր ուշադրությունը հրավիրեց Բ. Ն. Առաքելյանը։ Նմանօրինակ քարերի ամենաբազմազան տարբերակները քաջ հայտնի էին անտիկ աշխարհում և օգտագործվել են ձիթապտղի յուղի արդյունաբերության և խաղողագործության մեջ[1]։ Օրինակ՝ Կալիմնե կղզու մ. թ. ա. IV—III դդ. և Կրետե կղզու մ. թ. ա. II դ. պատկանող ձիթահաններում գտնվել են նման քարեր, որտեղ ձիթապտղի զանգվածը դրվել է քարի բաց հարթակի վրա և ամենապարզ լծակավոր մամլիչի օգնությամբ ճզմվել։ Յուղը հոսելով ակոսառվակով, ծորակի միջոցով լցվել է քարի առջևում տեղադրված անոթի կամ ավազանի մեջ[2]։

Համեմատելով հնագիտական նյութը ազգագրական տվյալների հետ, չի բացառվում, որ նույն սկզբունքով պատրաստված Դվինի սալը օգտագործված լինի ձիթագործության մեջ[3]։ Քարը գտնվել է Դվինի կենտրոնական թաղամասի մոտերքից, որտեղ հնագիտական ստույգ տվյալները հաստատում են քննվող ժամանակաշրջանում պալատական կամ տաճարային կառույցների գոյությունը[4]։ Տնտեսական պահանջների համար ձեթի ստացումը անհրաժեշտ էր, քանի որ այն օգտագործվում էր ինչպես սննդի, օծման, նույնպես և լուսավորության համար։ Նման քարեր օգտագործվել են նաև հնձաններում։ Խաղողը ոտքերով տրորելուց հետո մնացած զանգվածը լցրել են զամբյուղի կամ պարկի մեջ, դրել ծորակավոր քարե հարթակի վրա և կրկին ճզմել որևէ ծանրակի կամ, մեծ մասամբ, լծակավոր մամլիչի օգնությամբ, որի հետևանքով քաղցուն լցվել է ակոսառվակը և ծորակով թափվել անոթի մեջ։

Հայտնի է, որ Դվինը եղել է խաղողագործության կենտրոն, հետևաբար ուսումնասիրվող քարի դերը այս բնագավառում չպետք է անտեսել։ Խաղողի

---

[1] В. Ф. Гайдукевич, Виноделие на Боспоре («Материалы и исследования по археологии СССР», № 85, М.—Л., 1958, էջ 385)։

[2] Նույն տեղում, էջ 385, նկ. 29—31։

[3] Ազգագրական համեմատական նյութը մեզ է տրամադրել պատմական գիտությունների դոկտոր Վ. Հ. Բդոյանը, որին հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը։

[4] Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 88, 91, 92։

վերամշակումը տակավին ուրարտական ժամանակաշրջանից համարվել է տնտեսության կարևոր և եկամտաբեր ճյուղերից մեկը[5]։ Այդ նպատակով կառուցվել են մի քանի բաժանմունքներով հատուկ հնձաններ։ Ուշագրավ է Գառնի ամրոցի պալատական շենքի նկուղային հարկում հայտնաբերված

Նկ. 1. Դվինից հայտնաբերված սալ։

մ. թ. III դ. հնձանը, որի թեք հատակը կրաշաղախե լիցքից է, ողորկ և անջրաթափանց մակերեսով, իսկ ցածրադիր պատերը սվաղով պատված։ Խաղողը լցրել են ողորկ մասի մեջ և ոտքերով տրորել։ Քաղցուն հատակի թեքության շնորհիվ հոսելով պատի տակի կավե փողրակով, լցվել է հարևան սենյակում ավելի ցածրադիր հատակին դրված անոթի մեջ[6]։



Նկ. 2. Սալի վերակազմությունը։

Վանական մի ամբողջ տնտեսություն է սպասարկել Զվարթնոցի հնձանների մեծ խումբը։ Բացի այս հատուկ կառույցներից, Հայաստանի շատ շրջաններում մինչև այժմ էլ օգտագործվում են նաև ձեռքի հնձաններ, որոնք

5 Б. Б. Пиотровский, Ванское царство, М., 1959, էջ 142—147։

6 Բ. Ն. Ա ռ ա ք ե լ յ ա ն, Գ. Հ. Կ ա ր ա խ ա ն յ ա ն, Գառնի, 3-րդ, 1949—1956 թթ. պեղումների արդյունքները, Երևան, 1962, էջ 28։

փորածո գերաններից, տախտակներից կամ քարից պատրաստված տաշտեր են։ Նման տաշտերը շատ հարմար էին օգտագործման համար, քանի որ կարելի էր դնել բակի ցանկացած մասում, երբեմն էլ՝ հատուկ պատրաստված պատվանդանի վրա անշարժ ամրացնել։

Հայաստանում խաղողի վերամշակման հիմնական եղանակը եղել է ոտքերով ճզմելը։ Նույն երևույթը դիտվում է դեռևս անտիկ ժամանակաշրջանից մինչև մեր օրերը բոլոր այն երկրներում, որտեղ զարգացած է եղել տնտեսության այս ճյուղը։ Օրինակ, Հունաստանում, անտիկ դարաշրջանում, ձիթագործության մեջ օգտագործվող ամենապարզ լծակավոր մամլիչները հետագայում թափանցում են նաև խաղողագործության բնագավառ[7]։ Հյուսիս-մերձսեծովյան բնակավայրերում հայտնաբերված հնձաններում, որոնք խաղողագործական-գինեգործական մեծ համալիրներ էին, ոտքերով ճզմված խաղողի զանգվածը կրկին ճզմվել է լծակավոր մամլիչի օգնությամբ՝ ակոսառվակով և ծորակով եզերված քարերի վրա[8]։ Կամ՝ Պաղեստինի ժայռափոր հին հնձաններում խաղողի վերջնական մշակումը նույնպես կատարվել է լծակավոր մամլիչի օգնությամբ, անմիջապես հարթակներից մեկի վրա, և քանի որ հնձանը ժայռափոր էր, ուստի հատուկ քարի պահանջ չի զգացվել։

Առաջավոր Ասիայի շատ երկրներում ժամանակակից հնձանները բաղկացած են երկու հարթակից, մեկի վրա խաղողը ոտքերով ճզմելու, իսկ մյուսի վրա մնացորդները մամլելու համար[9]։

Վրաստանում մինչև այժմ գոյություն ունեն քննվող սալի նման քարեր, որոնց վրա դրվում է ճզմված խաղողի մնացորդներով լի արկղը և լծակավոր մամլիչի օգնությամբ մեկ անգամ ևս ճզմվում։ Ստացված գինին կոչվում է նակաչի, որը հաճախ խառնում են մաքուր գինուն՝ այն ավելի թունդ դարձնելու համար[10]։

Դվինից գտնված սալը, հավանաբար, նույնպես հնձանի քար է և օգտագործվել է նույն եղանակով։ 1976 թ. Արգիշտիխինիլիում հայտնաբերվել է նմանօրինակ քարով հելլենիստական ժամանակաշրջանի հնձան[11]։ Հայաստանի ո՛չ միջնադարյան և ո՛չ էլ ժամանակակից հնձաններում նման նշանակությամբ քարեր չեն եղել։ Ամենայն հավանականությամբ, դրանք լոկ տվյալ ժամանակաշրջանի և շրջապատի արդյունք էին և հետագայում իսպառ վերացան։

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մ. թ. ա. I դ. այդ քարերը անհետանում են անգամ Հյուսիս-մերձսեծովյան խաղողագործական-գինեգործական մեծ համալիրներից և խիստ սահմանափակ քանակությամբ օգտագործվում միայն տնային հնձաններում։ Ուստի, նախկինում խնամքով պատրաստված և մշակված սալերը փոխարինվում են ինքնագործ, կոպիտ,

---

7 Բ. Ֆ. Գայդուկևիչ, նշվ. աշխ., էջ 385—389։

8 Н. М. Пе ченкин, Археологические разведки в местности страбоновского Херсона («Известия археологической комиссии», вып. 42, 1911, էջ 111, նկ. 1), В. Ф. Гайдукевич, Боспорское царство, М.—Л., 1949, էջ 169, նկ. 29։ Նույնի՝ Виноделие на Боспоре, էջ 357, նկ. 2, նկ. 3, էջ 358, նկ. 4, էջ 377, նկ. 20, էջ 378, նկ. 21։

9 Բ. Ֆ. Գայդուկևիչ, Виноделие на Боспоре, էջ 389—390։

10 Նույն տեղում, էջ 390, նկ. 38, «Народы Кавказа», II, М., 1962, էջ 242—246։

11 «Սովետական Հայաստան», 29. 12. 1976։ Նույն սկզբունքով պատրաստված քար, որի վրա մեր ուշադրությունը հրավիրեց հնագետ Ժ. Դ. Խաչատրյանը, գտնվել է 1950 թ., պատահաբար, Արտաշատի շրջանի Քաղցրաշեն գյուղի հեղեղատից։

փոքր չափսերի քարերով։ Եվ արդեն մ. թ. I դ. այդ քարերի դերը մեծ կառույցներում կատարում էր խաղող ճզմելու հարթակներից մեկը, որի հատակը երեսպատվում էր մեկ հաա քառակուսի կամ մի քանի սալերով, իսկ լծակավոր մամլիչը փոխարինվում է կատարելագործված, պտուտակաշարժ մամլիչով։

Այսպիսով, փաստերը հաստատում են, որ նման քարերի ամենավաղ օրինակները պատկանում են մ. թ. ա. IV դ., իսկ ամենալայն օգտագործումը՝ հելլենիստական դարաշրջանին (մ. թ. ա. III—I դդ.)[12]։

Հաշվի առնելով քննվող սալի ունեցած աղերսները, օգտագործման ժամանակաշրջանը, մշակման կատարելությունը և վերը հիշատակված հնագիտական ու ազգագրական փաստերը, Դվինում հայտնաբերված քարը պետք է թվագրել հելլենիստական ժամանակաշրջանով, հավանաբար, ամենաուշը մ. թ. I դ.։

ТАРАПАН ПРОИЗВОДСТВЕННОГО ЗНАЧЕНИЯ, ОБНАРУЖЕННЫЙ В ДВИНЕ

ГАЯНЕ КОЧАРЯН

Резюме

В 1976 г. на территории Двинского городища случайно было обнаружено каменное ложе виноградного пресса — тарапан (рис. 1). Судя по сохранившейся части, оно имеет форму сегмента, на верхней поверхности которого тщательно вырублен вдоль края желоб, переходящий с двух сторон в сливы (рис. 2). На центральной плоскости тарапана при помощи прессования обрабатывали мезгу раздавленного винограда, чем и завершался процесс переработки винограда.

Широко распространенные в эллинистический период тарапаны применялись не только в виноделии, но и при изготовлении растительного масла. Аналогичный археологический материал, а также этнографические данные позволяют отнести Двинский тарапан к эллинистическому периоду, возможно, и к I в. н. э.

---

[12] В. Ф. Гайдукевич, *սշվ. աշխ. էջ 356—457։*